

**ՀԱՔԻՔ ԻՔՆ ՄԱՍԼԱՄԱՅԻ ԵՎ ՍԱԼՄԱՆ ԻՔՆ ՌԱՔԻԱՅԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ**

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Ա. Ս.

Հաբիբ իբն Մաալամայի և Մալման իբն Ռաբիայի Հայաստան և Այսրկովկասյան երկրներ կատարած արշավանքների թվագրման հարցում կան բազմաթիվ տեսակետներ¹: Դրանում, ինչպես նաև արշավանքների երթուղիներում որոշակիություն մտցնելու անհրաժեշտություն կա²:

652 թ. հայ-արաբական պայմանագրի կնքումից անմիջապես հետո՝ նույն թվականի աշնանը, Կոստաս Բ կայսրը (641-668) ներխուժեց Հայաստան և գրավեց Դվինը: Կայսեր ուղարկած զորքերը նվաճեցին նաև Վիրքը, սակայն անհաջողություն կրեցին Սյունիքում և այսպես կոչված Աղվանքում³: Դրանից հետո կայսրը, Հայաստանի և Վիրքի նվաճված տարածքների կառավարիչ նշանակելով Մավրիանոսին, 652 թ. վերջին⁴ վերադարձավ Կոստանդնուպոլիս: Երբ կայսրը ներխուժեց Հայաստան,

¹ IX դ. Բալագուրին Հաբիբ իբն Մաալամայի արշավանքը թվագրում է հիջրայի 25 թվականով (645-646) (տե՛ս 235, 1956, القاهرة, 1), كتاب فتوح البلدان, (بلادري, իսկ Իբն ալ-Ասիրը՝ հիջրայի 31 թ. (651-652) [(տե՛ս 59, 1967, (ابن الاثير, الكامل في التاريخ, 3, بيروت, (տե՛ս **Ghazarian M., Armenien unter der arabischen Herrschaft bis zur Entstehung des Bagratidenreiches, Marburg, 1903**, էջ 20-21, Առաքելյան Բ., Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում և հայերի պայքարն անկախության համար (Գիտական ժողովածու՝ նվիրված Հայաստանում սովետական իշխանության հաստատման 20-ամյակին, Ե., 1941, էջ 78)], Լորանը՝ 645 թ. [(տե՛ս *L'Armenie entre Byzance et l'Islam depuis la conquete arabe jusqu'en (Nouvelle edition revue et mise à jour par M. Canard), Lisbonne, 1980*, էջ 358)], Լեոն՝ 652 թ. հայ-արաբական պայմանագրից (ըստ նրա՝ այդ պայմանագիրը կնքվել է 653 թ.) առաջ (տե՛ս Երկերի ժողովածու, հ. Բ, Ե., 1967, էջ 308-312), Ն. Մանանդյանը կոստաս Բ կայսեր 652 թ. արշավանքը թվագրում է 654 թ., Թեոդորոս Ռշտունու հակահարձակումը՝ 655 թ., ուստի Հաբիբի արշավանքն ընկնում է 656 թ. (տե՛ս Արաբական արշավանքները Հայաստանում, Ե., հ. Բ, մաս Ա, Ե., 1978, էջ 585), Ստ. Մելիք-Բախշյանը Հաբիբի արշավանքը թվագրում է 654 թ. (տե՛ս Հայաստանը VII-IX դդ., Ե., 1968, էջ 79), **Տեր-Ղևոնդյան Ա.**, մի դեպքում արշավանքը թվագրում է 654 թ. (տե՛ս Հայաստանը արաբական խալիֆայության տիրապետության ներքո, Հայ ժողովրդի պատմություն, հ. Բ, էջ 313, Հայաստանը VI-VIII դարերում, Ե., 1996, էջ 75), իսկ մեկ այլ դեպքում՝ 654-655 թ. ձրմանը (տե՛ս *Армения и Арабский халифат, Е., 1977, с. 40*), Վ. Վարդանյանը՝ 653 թ. (տե՛ս Վասպուրականը VII դ. երկրորդ կեսին, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1974, N 2, էջ 120), իսկ Է. Դանիելյանը՝ 656 թ. (տե՛ս Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ առաքելական եկեղեցին (VI-VII դդ., Ե., 2000, էջ 219): Ա. Բոգվերածեն Հաբիբի արշավանքը թվագրում է 654-655 թթ. [(տե՛ս *Раннефеодальные грузинские государства в VI-VIII вв. (Очерки истории Грузии, т. II, Тбилиси, 1988, с. 172*):

² Տե՛ս **Առաքելյան Բ.**, Ժամանակագրական դիտողություններ (ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հաս. գիտ., Ե., 1941, N 1 (6), էջ 62):

³ Տե՛ս **Մեքնու.** էջ 165-166:

⁴ Նույն տեղում, էջ 168:

Թեոդորոս Ռշտունին ամրացավ Աղթամար կղզում⁵: Այդ ժամանակ նա արաբներից օգնություն խնդրեց ու ստացավ 7-հազարանոց մի զորագունդ: Քանի որ այն Հայաստան էր հասել տարվա վերջին, Հայոց իշխանը սպասեց, մինչև որ անցավ ձմեռը, որից հետո՝ 653 թ., անցավ հակահարձակման: Հայ-արաբական զորքը, հետապնդելով նահանջող բյուզանդական զորամասերին, Տայքի կողմից ներխուժեց Սև ծովի ափերն ու գրավեց Տրապիզոնը, որից հետո ավարով ու գերիներով վերադարձավ: Ապա Թեոդորոս Ռշտունին մեկնեց Դամասկոս, և Ասորիքի ու Միջագետքի արաբ կուսակալ Մուավիան նրան «իշխանություն էտ գՀայս և գՎիրս և գԱդուանս և գՍիւնիս, մինչև ցԿապկոհ և ցՊահակն ճորայ: Եւ նորա պայման էր եղեալ նմա՝ ածել գերկիրն զայն ի ծառայութիւն»⁶:

Սերեոսը վկայում է, որ 653 թ. աշնան վերջին⁷ արաբական մի զորախումբ եկավ և կանգ առավ Դվինում՝ նպատակ ունենալով «երթալ հարկանել գՎիրս սրով սուսերի»⁸: Վիրքը, հավանաբար, դեռևս ռազմակալված էր բյուզանդական զորքերի կողմից: Վաղահաս ցրտերը թույլ չըտվեցին արաբներին իրագործելու նախատեսված արշավանքը, և նրանք կրկին հեռացան Միջագետք⁹: Նրանց հեռանալուց հետո հայոց իշխաններն ի մի հավաքվեցին, և քանի որ Թեոդորոս Ռշտունին հիվանդացել էր ու քաշվել Աղթամար, որոշեցին ողջախոհ լինել ու խուսափել միմյանց միջև վեճերից: Որոշվեց երկրի իշխանությունն ու պաշտպանությունը հանձնել նախարարներին՝ ըստ նրանց իշխանության շրջանների ու հեծյալների թվի, ինչպես նաև հարկահավաքներ նշանակել¹⁰: Երկիրը մասնատող այս քայլերը հակառակ էին Թեոդորոս Ռշտունու քաղաքականությանը, ուստի և նա խնդրեց արաբներին վերջ դնել հայ իշխանների ինքնագլխությանը: Վերջիններին այդպիսի գործողությունների մղողը Վիրքում գտնվող Մավրիանոսն էր, ինչի համար էլ Հայոց իշխանը խրնդրում էր Մուավիային, որ նաև «գՎիրս սատակեսցէ ի սուր սուսերի»¹¹:

Հաջորդ տարի՝ 654 թ., սկսվեց Հաբիբ իբն Մասլամայի արշավանքը Հայաստան և այսրկովկասյան երկրներ: Ընդունված տեսակետի համաձայն՝ Հաբիբը նախ նվաճել է Կարնո քաղաքը, իսկ այնտեղից արշավել Մարդաղի-Խլաթ-Սիփան լեռան շրջան-Ապահունիք-Արձեշ-Արտաշատ-Դվին-Նախճավան-Սիսական-Տփղիս երթուղով¹²:

⁵ Նույն տեղում, էջ 165-166:

⁶ Նույն տեղում, էջ 169:

⁷ Տե՛ս **Առաքելյան Բ.**, Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում..., էջ 77: Է. Դանիելյանն այս դեպքը թվագրում է 654 թ.-ով, քանի որ, ըստ Սեբեոսի, այն տեղի էր ունեցել Կոստաս կայսեր գահակալության 13-րդ տարում (**Սեբեոս**, էջ 170, տե՛ս **Դանիելյան Է.**, նշվ. աշխ., էջ 217), չնայած Կոստաս կայսեր գահակալության 13-րդ տարին ոչ թե՛ 654 թ.-ն է, այլ 653/654 թ.-ը:

⁸ Տե՛ս **Սեբեոս**, էջ 171:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում, էջ 171-172:

¹¹ Նույն տեղում, էջ 172:

¹² Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հայաստանը արաբական խալիֆայության տիրապետության ներքո, էջ 313, Հայաստանը VI-VIII դարերում, էջ 75-79, *Армения и Арабский халифат*, с. 40-43, **Դանիելյան Է.**, նշվ. աշխ., էջ 220-221 և այլն:

Դատելով սկզբնաղբյուրների հաղորդումներից՝ Հաբիբը Հայաստան է արշավել երկու անգամ: Բալագուրին, առաջին հայացքից, Հաբիբ իբն Մաալամայի գլխավորությամբ միայն մեկ արշավանք է հիշատակում¹³, իսկ Սեբեոսը՝ երկուսը¹⁴: Ըստ Սեբեոսի՝ առաջին արշավանքը ընկնում է 654 թ., իսկ երկրորդը՝ 655 թ. գարնանը: Մեզ առավել հավաստի է թվում Սեբեոսի վկայությունը, քանի որ նա այդ դեպքերի ժամանակակիցն է: Սեբեոսի վկայությունը հաստատում է նաև արաբ պատմիչ Թաբարու հաղորդումը, ըստ որի՝ Հաբիբը Հայաստանը նվաճել է հիջրայի 31 թ. (651-652)¹⁵ և հաջորդ անգամ Հայաստան է արշավել մյուս տարի՝ հիջրայի 32 թ. (652-653)¹⁶, ընդ որում՝ հիջրայի 32 թ. արշավանքը համընկնում է Բալագուրու հիշատակած արշավանքին, երբ Հաբիբը Հայաստան ներխուժեց Վերին Միջագետքի (Ջազիրա) կողմից՝ Ասորիքի արաբներից բաղկացած զորագնդով¹⁷: Սակայն, մեր կարծիքով, Բալագուրին ևս Հաբիբի գլխավորությամբ երկու արշավանք է հիշատակում: Խոսելով Դվին քաղաքի գրավման մասին՝ նա մի դեպքում հաղորդում է, թե Դվինի մոտակայքում Հաբիբը ճակատամարտեց Մավրիանոսի դեմ ու հաղթանակ տարավ¹⁸, իսկ մեկ այլ դեպքում, պատմելով Դվինի գրավման մասին, Մավրիանոսին չի հիշում, այլ սուկ նշում է հայերի դիմադրությունը¹⁹: Խնդիրն այն է, որ Բալագուրին տարբեր մարդկանցից էր լսել այդ պատմությունները: Կարծում ենք, որ, անկասկած, առաջին դեպքում խոսքը Հաբիբի 654 թ. կատարած արշավանքի մասին է, իսկ երկրորդ դեպքում՝ 655 թ. արշավանքի: Ըստ Սեբեոսի՝ 654 թ. Հաբիբը Մավրիանոսին պարտության մատնեց Նախճավանի մոտ²⁰, իսկ ըստ Բալագուրու՝ Դվինի: Կարծում ենք, Յակուբու այն հաղորդումը, որ Հաբիբն արդեն Հայաստանի մի մասը նվաճել էր, երբ նրան ներկայացավ Սալման իբն Ռաբիան²¹, ևս խոսում է այն մասին, որ նա երկու անգամ է արշավել Հայաստան:

Այսպիսով, մեր կարծիքով, 654 թ. արշավանքը տեղի է ունեցել հետևյալ կերպ: 654 թ. Մուավիան Հաբիբ իբն Մաալամային ուղարկեց բյուզանդական զորքերին Վիրքից քշելու և երկիրը նվաճելու համար: Արաբական զորքերը ներխուժեցին Հայաստան և, Սեբեոսի վկայությամբ, օկլալան ի ծագաց ի ծագս գերկիրն ամենայն²²: Պատմիչի այս վկայությունը, հավանաբար, վերաբերում է միայն Հայաստանի կենտրոնական և արևելյան շրջաններին, քանի որ արևմտյան հատվածի իշխաններից ոմանք Հաբիբի 655 թ. արշավանքի ժամանակ նրան ներկայացան Վերին Միջագետքի և Հայաստանի արևմտյան հատվածի նվաճող Իյադ իբն Ղան-

¹³ Տե՛ս Բլաճրի, I, էջ 234-240: Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 75-79:

¹⁴ Տե՛ս **Սեբեոս**, էջ 173-174:

¹⁵ Տե՛ս Բլաճրի, 3, Բիրտ, ص 71:

¹⁶ Նույն տեղում, էջ 77-78:

¹⁷ Տե՛ս Բլաճրի, I, էջ 234:

¹⁸ Նույն տեղում, էջ 235:

¹⁹ Նույն տեղում, էջ 237:

²⁰ Տե՛ս **Սեբեոս**, էջ 174:

²¹ Տե՛ս Բլաճրի, 2, Բիրտ, ص 163, 197:

²² Տե՛ս **Սեբեոս**, էջ 173:

մի հետ կնքած պայմանագրերով²³: Մեր կարծիքով, եթե Հաբիբ իբն Մաալաման 654 թ. նվաճած լիներ Հայաստանի նաև արևմտյան մասերը, ապա տեղի իշխանները 655 թ. նրան կներկայանային հենց նրա հետ կնքած պայմանագրերով: Վիրքը շարունակեց մնալ բյուզանդական զորքի վերահսկողության տակ, որը 654-655 թթ. ձմռանը Մավրիանոսի գլխավորությամբ ներխուժեց Հայաստան ու գրավեց Դվինը: Բյուզանդական զորքը, շարունակելով արաբներին դուրս մղել Հայաստանից, իջավ հարավ ու պաշարեց Նախճավանը, որտեղ, սակայն, գարնանը հակահարված ստացավ արաբներից և նահանջեց Վիրք²⁴: Ըստ Բալազուրու, նվաճելով Հայաստանի որոշ շրջաններ, Հաբիբը շարժվեց Դվինի վրա: Քանի որ քաղաքի բնակչությունը հանձնվելու միտք չունեք, Հաբիբը պաշարեց այն: Այստեղ նա ճակատամարտ տվեց բյուզանդական զորավար Մավրիանոսին (Մավրիան ալ-Ռումի) և պարտության մատնեց նրան: Այստեղ է, որ հայտնվեց Մալման իբն Ռաբիհան ու միացավ նրան: Բալազուրին կարծում է, թե, այդուամենայնիվ, երկու արաբ զորահրամանատարների հանդիպումը տեղի է ունեցել Կարնո քաղաքում²⁵:

Հաբիբ իբն Մաալամայի 654 թ. արշավանքը հիշատակում է նաև բյուզանդական պատմիչ Թեոփանես Խոստովանողը²⁶:

655 թ. գարնանը երկու ուղղություններով սկսվեց արաբական զորքերի նոր արշավանքը: Առաջին զորախումբը, որը պետք է նվաճեր Հայաստանը և Վիրքը, գլխավորում էր Հաբիբ իբն Մաալաման, իսկ երկրորդը, որը նվաճելու էր Սասանյանների տիրապետության շրջանի Ադվանից մարզպանության տարածքները²⁷, գլխավորում էր Մալման իբն Ռաբիհան²⁸: Արաբները նվաճեցին Հայաստանն ու այսրկովկասյան երկրները և գերեվարեցին շատ իշխանների՝ նրանց ընտանիքներով: Թեոդորոս Ռըշտունին ինքնակամ միացավ գերյալներին ու նրանց հետ գնաց Միջագետք՝ հավանաբար, կորցրած իշխանությունը Մուավիայից հետ ստանալու նպատակով, բայց այնտեղ վախճանվեց ու, բերվելով հայրենիք, թաղվեց իր հայրենի Ռշտունիքում²⁹:

Բալազուրին Հաբիբ իբն Մաալամայի 655 թ. արշավանքի մասին հաղորդում է, թե երբ Օսման իբն Աֆֆանը խալիֆա դարձավ, նա հրամայեց Մուավիային, որը Ասորիքի, Ջազիրայի (Վերին Միջագետք) ու սահմանային ամրությունների գոտու (Մուղուր) կառավարիչն էր, Հաբիբ իբն Մաալամա ալ-Ֆիհրիին ուղարկել Հայաստան: Հաբիբ իբն Մաալաման արշավանքի ելավ 6 հազար զորքով (կամ 8 հազար): Նա հասավ Կալիկալա

²³ Տե՛ս بلاذري, I, էջ 236-237:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Տե՛ս بلاذري, I, էջ 234-235:

²⁶ Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բյուզանդական աղբյուրներ, Դ, **Թեոփանես Խոստովանող**, թարգմ. քննադից, առաջաբան և ծանոթ. Ն. Բարթիկյանի, Ե., 1983, էջ 56:

²⁷ Ադվանից մարզպանության մեջ էին մտնում Մեծ Հայքի Արցախ և Ուտիք աշխարհները, Բուն Ադվանից աշխարհը, Ռոտատակը, Բազկանը, Դարբանդը, Թավասպարքը, Ղեկքը, Չոդան, Շրուանը և Խարուանը (տե՛ս **Երևմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 120):

²⁸ Տե՛ս بلاذري, I, էջ 234-240:

²⁹ Տե՛ս Սեբևոս, էջ 174:

(Կարնո քաղաք) ու պաշարեց այն: Քաղաքի բնակիչները քաղաքը հանձնելու համար Հաբիբից երաշխավորագիր պահանջեցին՝ քաղաքից հեռանալու կամ ջիզիա (գլխահարկ) վճարելու պայմանով մնալու դեպքերի համար: Հաբիբը կատարեց այդ պահանջը, և կարնեցիներից շատերը հեռացան Բյուզանդիա: Հաբիբը մի քանի ամիս մնաց Կարնո քաղաքում, մինչև որ լուր ստացավ, թե Արմանիակուսի պատրիկը (Արմենիակների բանակաթեմի գորավարը) իր դեմ մեծ զորք է հավաքում, ու նրան միացել են ալանները, աբխազները և խազարները: Հաբիբը Օսման խալիֆայից օգնություն խնդրեց, և վերջինը հրամայեց Մուավիային՝ նրան օգնություն ուղարկել: Մուավիան նրան երկու հազար մարդ ուղարկեց: Օսման խալիֆան նաև Քուֆայի կառավարիչ Սաիդ իբն Ասիին հրամայեց զորք ուղարկել Հաբիբին՝ Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլիի գլխավորությամբ: Վերջինը հեծելագործի հրամանատար էր ու կոչվում էր Սալման ալ-Խայլ (հեծյալների Սալման): Սալման իբն Ռաբիան օգնության հասավ Քուֆայի արարներից բաղկացած 6 հազար զորքով: Մինչ այդ բյուզանդական բանակը իր դաշնակիցներով եկել ու ճամբար էր խփել Եփրատ գետի ափին: Հաբիբ իբն Մաւալման չսպասեց Սալմանի գալուն ու գիշերային հարձակումով պարտության մատնեց թշնամուն: Սալմանը հասավ այն ժամանակ, երբ ճակատամարտը վերջացել էր, սակայն նրա զինվորները ավարից բաժին պահանջեցին: Հաբիբի և Սալմանի միջև այս պատճառով վեճ սկսվեց, և երկու զորահրամանատարներն անարգեցին միմյանց: Երբ խալիֆան իմացավ այդ մասին, որոշեց, որ ավարը պատկանում է Հաբիբի զինվորներին, իսկ Սալմանին հրամայեց արշավել Առան³⁰:

Հաբիբը այնուհետև շարժվեց արևելք ու բանակ դրեց Մարբալայում (Մարդադիին³¹): Այստեղ նրա մոտ եկավ Խլաթի իշխանը (բաթրիկ ալ-Խիլաթ) Էյադ իբն Ղանմի գրությամբ, որով վերջինը երաշխավորել էր նրա անձը, ունեցվածքը և երկիրը ու ճանաչել նրա տիրությունները՝ հարկ վճարելու պայմանով: Հաբիբն այն հաստատեց: Ապա շարժվեց առաջ ու բանակեց մի վայրում՝ Հարաքի (Հարք)³² և Դաշտ ալ-Վարաքի (Վարագա դաշտ) միջև, ուր եկավ Խլաթի պատրիկը՝ բերելով իր վրա դրված հարկը: Այնուհետև նա իջավ Խլաթ, այնտեղից էլ շարժվեց աս-Սիբանա (Սիբան)³³, ուր նրա մոտ եկավ Մուքսի (Մոկս) տերը, որը Վասպուրականի (Բուսֆուրքաջան) մեջ էր մտնում: Հաբիբը ճանաչեց նաև նրա իշխանությունը սեփական գավառում ու խաղաղության թուղթ ու երաշխավորագիր տվեց: Հաբիբը զորք ուղարկեց Արջիշը (Արճեշ) և Բաջունայսը (Ապահունիք) նվաճելու և բնակչությանը գլխահարկ պարտադրելու: Ապա նրա մոտ եկան Արճեշի և Ապահունիքի մեծամեծները, ու Հաբիբը ճանաչեց նրանց իրավունքները հարկ վճարելու պարտավորության դիմաց: Բալագուրին հաղորդում է, որ Թիրրիխի լիճը (Վանա լիճ) մինչ այդ ազատ էր ձկնորսության համար, և Հաբիբը դրա կարգավիճակը չփոխեց: Հաբիբն արշավեց Արտաշատի (Ագդիսաթ) ուղղությամբ, որն արաբ հեղի-

³⁰ سنی بلاذري، I، ٢٤ 234-235:

³¹ Տե՛ս **Խալաթնանց Բ.**, նշվ. աշխ., էջ 41, ծան. 4, **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հայաստանը VI-VIII դարերում, էջ 76:

³² Նույն տեղում, էջ 42, ծան. 3, նույն տեղում, էջ 77:

³³ Նույն տեղում, էջ 42, նույն տեղում:

նակը կոչում է Կարիաթ ալ-կիրմիզ (իմա՝ [Ռոդան] կարմրի գյուղ): Արաբական զորքերը բանակ խփեցին Դվինի դիմաց: Հաբիբը հեծյալ ջոկատ ուղարկեց քաղաքը գրավելու: Բայց քաղաքի բնակիչները ապաստանեցին պարիսպների ներսում և սկսեցին նետահարել արաբական ջոկատին: Հաբիբը քարանետ մեքենաների միջոցով սկսեց փլուզել պարիսպները, ինչը ստիպեց դվինցիներին հաշտության առաջարկ անելու: Արաբ զորահրամանատարն ընդունեց այն՝ նրանց տալով հաշտության թուղթ և ապահովության երաշխավորագիր: Նրա հեծյալներն արշավեցին Ջուռնի (Գառնի), ապա Աշուշ (Աշոցք)³⁴, հասան մինչև Ջատ ալ-Լուջում (սանձերի վայր) լեռը և Ազատների (ահրար) հովիտը (իմա՝ Ազատ գետի հովիտ), գրավեցին շրջապատի բոլոր գյուղերը: Նա մարդ ուղարկեց Սիրաջ Թայր (Շիրակ և Տայք) ու Բադրավանդ (Բագրևանդ), որից հետո նրան ներկայացավ այդ գավառների իշխանը և Հաբիբի հետ հաշտություն կնքեց հարկ վճարելու, մահմեդականներին խորհուրդներ տալու և հյուրընկալելու պայմանով: Դրանից հետո Հաբիբ իբն Մաալաման արշավեց Նաշավա (Նախճավան) և գրավեց այն՝ Դվինի գրավման պայմաններին համանման պայմաններով: Այդ ժամանակ նրան ներկայացավ Բուսֆուրաջանի (Վասպուրականի) պատրիկը և հաշտություն կնքեց իր երկրի համար: Տարեկան հարկի դիմաց Վասպուրականի իշխանը³⁵ իր զինված ուժերը (հետևակ և հեծելազոր) պահպանելու իրավունք ստացավ: Հաբիբի դեմ ինքնապաշտպանության փորձ կատարեցին Սիսաջանի (Սիսական, Սյունիք) բնակիչները, սակայն Հաբիբը հաղթեց նրանց, գրավեց Վայսը (Վայոց ձոր, Վայք) և Սիսականի ամրոցների բնակիչների հետ հաշտության պայմանագիր կնքեց հարկ վճարելու պայմանով³⁶:

Այնուհետև Հաբիբն արշավեց Վիրք (Ջուրգան) և հասավ Ջատ ալ-Լուջում կոչված վայրը: Այդ ժամանակ Հաբիբի մոտ եկավ Վիրքի իշխանի (Բաթրիկ ալ-Ջուրգան) սուրհանդակը՝ բերելով նրա նամակն ու խնդրե- լով երաշխավորանք ու հաշտության գիր: Հաբիբը բավարարեց նրա խնդրանքը: Արաբական զորքերը նվաճեցին նաև Հվարիհը (Չվարի)³⁷, Քուսֆարնիսը (Քուստ-ի Փառնես), Քիսալը (Քասաղ), Խունանը (Հունարակերտ), Սամսախին (Սամցխե), ալ-Ջարդմանը (Գարդման), Քուստասջին (Քուստք)³⁸, Շավշիտը (Շավշեթ), Բազալիտը (Բազալեթ) գլխահարկ ու

³⁴ Նույն տեղում, էջ 43, ծան. 6, նույն տեղում:

³⁵ Ամենայն հավանականությամբ, խոսքը Թեոդորոս Ռշտունու մասին է, որը 639 թ.-ից իշխում էր Վասպուրական գնդի երկրում [(տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հայաստանի քաղաքական ինքնուրույնությունը VII դ. 30-90-ական թթ., (Հայ ժողովրդի պատմություն, հ. Բ, էջ 305)], որը Հայաստանի՝ 591թ. բաժանումից հետո համարժեք էր դարձել Հայոց մարզպանությանը [(տե՛ս **Սեբեոս**, էջ 84, 166, տե՛ս նաև **Арутюнян Б.**, *Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елишеэ (Кавказ и Византия, вып. I, Е., 1979, с. 19-35), նույնի՝ Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհագրոյց»-ի (Բանբեր Երևանի համալսարանի, 1983, N 3, էջ 137)]:*

³⁶ Տե՛ս بلاذري, I, ;էջ 236-237:

³⁷ Քաղաք Մցխեթայի մոտակայքում (տե՛ս **Երեմյան Ա.**, Հայաստանը IX-XI դարերում, Ե., 1987):

³⁸ Ս. Երեմյանը փորձում է արաբական աղբյուրներում հիշատակվող Քուստասջին նույնացնել Արցախի Քուստի (Քուստ-ի Փառնես) գավառին (**Երեմյան Ա.**, «Աշխարհագրոյցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ (ՊԲՀ, 1973, N 2, էջ 270, ծան. 91), սակայն այդ գավառին նույնական է նույն աղբյուրներում հիշատակվող Քուսֆարնիսը:

հողահարկ վճարելու պայմանով, և Կալարջիտը (Կղարջք), Թարիալիտը (Թռեղք), Խախիթը (Կախեթ), Ջավախիթը (Ջավախք), Արթահալը (Արտահան), Բաբ ալ-Լանը (Ալանաց դուռ), աւ-Սանարիան (Շանարք) և աղ-Դուղանիան (Դիդոյք)³⁹ հարկ տալու պայմանով⁴⁰:

Հարիբ իբն Մապամայի 655 թ. արշավանքը հիշատակում է նաև Սեբեոսը: 655 թ. գարնանը, Նախճավանի մոտ հակահարված տալով Մավրիանոսին, Հարիբը շարժվեց Կարնո քաղաք և պաշարեց այն: Կարնեցիները երկար պաշտպանվել չկարողացան ու շուտով հանձնվեցին: Այնուհետև արաբները նվաճեցին Հայաստանի մյուս շրջանները՝ Վիրքը, այսպես կոչված Աղվանքը և Սյունիքը⁴¹:

Սալման իբն Ռաբիան ներխուժեց Առան ու հաշտության պայմանագրով գրավեց Բայլականը⁴²: Բնակիչների կյանքը և գույքը արաբները կրկին երաշխավորում էին գլխահարկ ու հողահարկ վճարելու պայմանով: Հավանաբար, նա արշավել էր Ատրպատականի կողմից Արդաբիլ (Արտավետ)-Վարսան (Վարդանակերտ)-Բարդասա (Պարտավ) ճանապարհով⁴³: Բայլականից Սալմանը շարժվեց հյուսիս ու բանակեց Թուրթուր (Տրտու) գետի ափին՝ Պարտավի դիմաց: Պարտավի բնակիչները դիմեցին ինքնապաշտպանության, իսկ արաբները սկսեցին ասպատակել շրջակա գյուղերը: Ի վերջո պարտավցիները հաշտություն խնդրեցին, ու նրանց պարտադրվեցին նույն պայմանները, ինչ Բայլական քաղաքին: Պարտավից Սալմանը հեծելագոր ուղարկեց նվաճելու Շակաշինը (Շակաշեն), Միսկուանը (Մեծ Կունք), Ուզը (Ուտի), Միսրիանը (Մեծ Իրանք), Հարջալիանը (Հարճլանք) և Տիարը (Տրի)⁴⁴, այնուհետև՝ Առանի մյուս հատվածները: Բալասաջանի (Բաղասական)⁴⁵ քրդերին նա կոչ արեց ընդունելու մահ

³⁹ Դիդոյները բնակվում են Անդյան կոյսու գետի ակունքների շրջանում (տե՛ս **Երմյան Ա.**, նշվ. աշխ., էջ 49):

⁴⁰ Տե՛ս بلذري I, չջ 236-239: Հայկական տեղանուններին Բալագուրու հիշատակած տեղանվանումների նույնացումը մեծ հավանականությամբ կատարել են Մ. Ղազարյանը (**Ghazarian M.**, p. 20-21) և Ա. Տեր-Ղևոնդյանը (**Տեր-Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 76-79, *Армения и Арабский халифат*, с. 41-43):

⁴¹ Տե՛ս **Սեբեոս**, էջ 174:

⁴² Համապատասխանում է այժմ Օրեն-կալա կոչվող ավերակներին (տե՛ս **Треввер К.**, *Очерки по истории и культуре Кавказской Албании (IV в. до н. э.-VII в. н. э.)*, М.-Л., 1959, с. 265-266. Տե՛ս նաև *Большая Советская Энциклопедия* [(այլուհնսնի ըին), т. 18, М., 1974, с. 50]:

⁴³ Տե՛ս **Ալ-Իստահրի**, *Kitáb masâlik al-mamâlik* (BGA, editio III, p. I, *Lugd. Bat.*), 1967, էջ 192, **Ibn Khordadbeh**, էջ 122: Այդ ճանապարհի մասին մանրամասնորեն տե՛ս **Եղիազարյան Ա.**, Արմինիա ոստիկանությունը..., էջ 93-98:

⁴⁴ Այս նույնացումները մեծ հավանականությամբ կատարել է Ա. Տեր-Ղևոնդյանը (տե՛ս **Տեր-Ղևոնդյան Ա.**, նշվ. աշխ., էջ 82, *Армения и Арабский халифат*, с. 43-44): Դրանք Մեծ Հայքի Արցախ և Ուտիք աշխարհների գավառներն են:

⁴⁵ Բաղասական կամ Դաշտի Բաղասական անվանումը, ամենայն հավանականությամբ, վերաբերում էր կուր գետի ստորին հոսանքից հյուսիս տարածվող ողջ դաշտավայրային շրջանին [(տե՛ս **Ուլուբաբյան Բ.**, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ (Բանբեր Երևանի Համալսարանի), 1971, N 1, էջ 178-182, **Арутюнян Б.**, նշվ. աշխ., էջ 31-34):

մեղականությունը, սակայն նրանք հարձակվեցին Սալմանի ուժերի վրա ու պարտվեցին: Նրանցից ոմանք պարտավորվեցին վճարել գլխահարկ, իսկ մյուսները՝ անասնահարկ (սադակա): Սալմանը գրավեց նաև Շամքորը: Ապա Սալմանը գնաց Կուր և Երասխ գետերի ջրկիցի մոտակայքում գտնվող Բարդիջ քաղաքը⁴⁶, նրա մոտակայքում անցավ Կուրն ու, արշավելով հյուսիս, գրավեց Կաբալան (Կապադակ)⁴⁷: Սալմանի հետ, հարկ վճարելու պայմանով, հաշտություն կնքեց Շաքքանի (Շաքե) և Կամիբարանի (Կամբեճան) տերը⁴⁸: Այնուհետև Սալմանի հետ նույն պայմանով հաշտություն կնքեցին նաև Խայզանի (Խարվան) ժողովուրդը⁴⁹, Շարվանի (Շիրվան)⁵⁰ թագավորը, լեռների (ամենայն հավանականությամբ, խոսքը Կովկասյան լեռների արևելյան հատվածի մասին է) բոլոր թագավորները, Մասկաթի (Մազքթաց աշխարհ)⁵¹, Շաբուրանի (Շապուրան)⁵² և ալ-Բարի (Դարբանդ) բնակիչները: Սակայն երբ Սալմանն անցան Դարբանդն ու արշավեց Խազարական խաքանություն, Դարբանդի բնակիչները նրա հետևից փակեցին դռները: Բալանջար⁵³ կոչվող գետից հյուսիս խազարական խոշոր զորքով նրա դեմ դուրս եկավ խաքանը ու պարտության մատնեց արաբներին: Սպանվեցին թե՛ Սալման իբն Ռաբիհան և թե՛ նրա 4 հազար զինվորները⁵⁴:

Ըստ ալ-Բուֆուի՝ Սալմանի հետ հաշտություն են կնքել ալ-Լաբգի⁵⁵, Ֆիլանի⁵⁶ և Թաբարսարանի (Թավասպարք)⁵⁷ տերերը⁵⁸: Այդ ժամանակ

⁴⁶ Կուր և Երասխ գետերի միջև՝ դրանց ջրկիցի մոտակայքում, կար մի բնակավայրի ավերակ (տե՛ս **Ջալալնանց Ս.**, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տրփլիսիս, 1858, էջ 364), որը, ամենայն հավանականությամբ, համապատասխանում է Բարդիջ քաղաքին (տե՛ս **Եղիազարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 103-106):

⁴⁷ Աղվանից թագավորության նախկին մայրաքաղաքը: Ներկայումս համանուն գյուղ Նիջ գյուղի մոտակայքում (տե՛ս **Երևմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 40):

⁴⁸ Շաքե գավառը համապատասխանում է Շաքիի կամ Նուխի շրջանին (նույն տեղում, էջ 73), իսկ կամբեճան գավառը՝ ներկայիս Շիրակի անջրդի դաշտավայրին (նույն տեղում, էջ 57): Հաբիբ իբն Մասլամայի արշավանքի ժամանակ արդեն այստեղ միասնական իշխանություն գոյություն ուներ (տե՛ս **Եղիազարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 40-43):

⁴⁹ Երկիր ներկայիս Գիլգիլ-չայ և Սումգայիթ գետերի միջև (տե՛ս **Երևմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 56):

⁵⁰ Երկիր ներկայիս Շաքրան-չայի և Գեղգենի-չայի միջև (նույն տեղում, էջ 74):

⁵¹ Համարյա ամբողջովին համապատասխանում է հետագայի Մուշկուր նրկրին, որը տարածվում էր Դարբանդի ու Շապուրան քաղաքի և Ղուբայի ու Կասպից ծովի միջև (տե՛ս *История, география и этнография Дагестана 18-19 вв., архивные материалы, М., 1958, с. 87-90*):

⁵² Համանուն բնակավայրը ներկայիս Շաքրան-չայի ափին (նույն տեղում, էջ 73):

⁵³ Այս անվանը կանդրադառնանք ստորև:

⁵⁴ *سنن بلذري*, I, չջ 240-241:

⁵⁵ Իմա՝ Հարավային Դաղստան [(տե՛ս **Եղիազարյան Ա.**, Հնր (Խուայյ)-Դարբանդ (Բաբ ալ-Աբվաբ) ճանապարհին ըստ արաբ աշխարհագետ ալ-Մուկադդասու (ՊԲՀ, 2005, N 3, էջ 156-157)]:

⁵⁶ Գտնվում էր Թավասպարքից հյուսիս-արևմուտք (տե՛ս **Jacut**, I, էջ 438-439, III, էջ 933):

⁵⁷ Երկիր Ռուբաս գետի վերին ու միջին հոսանքի ավազանում (տե՛ս *История, география и этнография Дагестана 18-19 вв., с. 86-87, 102-107, 150-154, 197-199, 311-317*):

⁵⁸ Տե՛ս **al-Kufi**, II, էջ 113-114:

Դարբանդում էր գտնվում խազարների խաքանը՝ 300-հազարանոց զորքով, որը, սակայն, որոշեց նահանջել: Սալմանը գրավեց Դարբանդը, երեք օր հանգիստ տվեց իր զորքին, իսկ հետո ներխուժեց Խազարական խաքանություն ու հասավ Յարքու քաղաքին: Այդտեղից նա շարժվեց դեպի խազարական Բալանջար քաղաքը: Կարծում ենք, որ Յարքուն Թարգու քաղաքի անվան աղավաղումն է: Յարքու-Թարգուից հետո Սալմանն արշավեց Բալանջար: Կարծում ենք, որ Թարգուն նույնական է ներկայիս Ղամրիոզեն գետի միջին հոսանքի ձախ ափին գտնվող Թարքի վայրին⁵⁹, իսկ Բալանջարը՝ Վառաչանին⁶⁰, որը գտնվում էր դրանից հյուսիս և տեղադրվում է ներկայիս Կաֆիր Ղումուխ վայրում՝ Բույնակակ քաղաքի մերձակայքում⁶¹: Ավելի հյուսիս գտնվում էր Սալմանդար քաղաքը, որը տեղադրվում է ներկայիս Մախաչկալա քաղաքի մոտակայքում գտնվող Թարքի վայրում⁶²: Այս տեղադրությունների օգտին է խոսում նաև ալ-Քուֆու կողմից Սալման իբն Ռաբիայի՝ Դարբանդից հյուսիս կատարած արշավանքի նկարագրության աշխարհագրական հերթականությունը: Բալանջարի ճանապարհին Սալմանի զորքը հասավ մի արագահոս գետի ու կանգ առավ: Քաջություն ձեռք բերած խաքանը 300-հազարանոց բանակով հարձակվեց արաբների վրա և կոտորեց նրանց⁶³:

Իբն ալ-Ասիրը, Յակուբին և Իբն ալ-Ֆակիհը համարյա նույնությամբ կրկնում են Բալագուրու և ալ-Կուֆու տեղեկությունները⁶⁴:

Ամփոփելով քննության արդյունքները՝ արձանագրենք, որ Հաբիբ իբն Մասլաման Հայաստան է արշավել երկու անգամ: Առաջին արշավանքը Հայաստան տեղի է ունեցել 654 թ., երբ Մուավիայի հրամանով Հաբիբը ներխուժեց Հայաստան ու նվաճեց երկիրը: 654-655 թթ. ձմռանը Վիրքում գտնվող բյուզանդական զորավար Մավրիանոսը հարձակվեց արաբների վրա, որոշ հաջողությունների հասավ, սակայն, ի վերջո, պարտություն կրեց ու նահանջեց Վիրք: 655 թ. գարնանը երկու ուղղություններով սկսվեց արաբական զորքերի նոր արշավանքը: Հայաստանն ու Վիրքը նվաճեց Հաբիբ իբն Մասլաման, իսկ Մասանյանների տիրապետության շրջանի Աղվանից մարզպանության տարածքը՝ Սալման իբն Ռաբիան:

⁵⁹ Տե՛ս ցարական բանակային շտաբի հինգվերստանոց քարտեզի ի. 6. պլանշետը:

⁶⁰ **Еремян С. Т.**, *Моисей Каланкатуйский о посольстве албанского князя Вараз-Трдата к хазарскому хакану Алп-Илитверу (Записки Института востоковедения АН СССР, т. VII, 1939, с. 143):*

⁶¹ Տե՛ս **Երևմյան Ա.**, Հայաստանը ըստ «Աշխարհագրոց»-ի, էջ 82: Փորձ է կատարվել Բալանջարը տեղադրելու Բելիջինյան միջնադարյան Թոփրադ-կալա բնակավայրի տեղում՝ Դարբանդից 25 կմ դեպի հարավ [(տե՛ս **ԽՏՏՏՈՒՓ Թ.**, *О местоположении ранесредневековых городов Варацана, Баланджара и Таргу (Сборник Древности Дагестана, Махачкала, 1974, с. 199)*], ինչը սխալ է, քանի որ Բալանջարը գտնվում էր ոչ թե՛ Դարբանդից հարավ, այլ հյուսիս (տե՛ս **al-Kufi**, II, էջ 115, VIII, էջ 32-35, بلانري, I, էջ 240-241):

⁶² Նույն տեղում, էջ 81:

⁶³ Տե՛ս **al-Kufi**, II, էջ 115:

⁶⁴ Տե՛ս ابن الاثير, III, էջ 43-44, يعقوبي, II, էջ 163, *Ibn al-Fakih al-Hamadhani, Kitáb al-boldân (BGA, editio II, p. V, Lugd. Bat., 1967, էջ 287-293):*

**ПОХОДЫ ХАБИБА ИБН МАСЛАМЫ И САЛМАНА
ИБН РАБИИ В АРМЕНИЮ И ЗАКАВКАЗСКИЕ СТРАНЫ**

ЕГИАЗАРЯН А. С.

Резюме

В 654 г. арабская армия, возглавляемая Хабибом ибн Масламой, вторглась в Армению и захватила ее центральные части. Однако зимой 654-655 гг. византийская армия, напав на арабов, заставила их отступить. В 655 г. арабские войска во главе с Хабибом ибн Масламой и Салманом ибн Рабией вновь вторглись в Армению и закавказские страны. Хабиб ибн Маслама завоевал Армению и Грузию, а Салман ибн Рабия захватил Арцах, Утик, так называемую Албанию (Агванк), прикаспийские области (от Дербенда до реки Кур) и Восточную часть Кавказского хребта.